



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

31 հուլիսի 2019թ. թիվ 490-Ա

**ԱՐՄԻՆԵ ՄԻԽԱՅԵԼԻ ԳԱԼՍՅԱՆԻՆ**  
**«ՎԱՀԱԳՆԻԻ Մ.ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Վահագնիի Մ» Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 26-ի թիվ 5 որոշումը, հաշվի առնելով Ա.Գալստյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Արմինե Միխայելի Գալստյանին նշանակել «Վահագնիի Մ» Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով 2019 թվականի օգոստոսի 1-ից:

2. Ա.Գալստյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

 Invalid signature

**ԱՐՄԻՆԵ ՄԻԽԱՅԵԼԻ**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հուլիսի 31

ք.Վանաձոր